Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2021 թվականի սեպտեմբերի 14-ի
N 210-Ա որոշման

ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք.Գյումրի « » օգոստոսի 2021 թ.

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանը՝ ի դեմս Գյումրի համայնքի ղեկավար Սամվել Միսակի Բալասանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամը՝ ի դեմս հիմնադրամի տնօրեն Հրահատ Ստեփանյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ ԿՈՂՄԵՐ) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Գյումրի քաղաքում ժամանակավոր կացարաններում բնակվող և տնազուրկ ընտանիքների բնակապահովման խնդիրների լուծում:

Կողմերը՝

- Գյումրու համայնքապետարանը «Անի» թաղամասում «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամին անհատույց հատկացնում է հողատարածք բազմաբնակարան շենք կառուցելու համար և տրամադրում է արտաքին ինժեներական ցանցերի կառուցման նախագիծ:

- Գյումրի համայնքից ընտրվում են շահառու ընտանիքներ՝ առաջնահերթություն տալով քաղաքի կենտրոնական հատվածներում և կանաչ գոտիներում տեղադրված ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներին:

- «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամը հատկացնում է համապատասխան գումար բազմաբնակարան շենքի նախագծման և շինարարության իրականացման համար: Ներդրվող գումարի 50 տոկոսը ընտանիքների համար անհատույց նվիրատվություն է լինելու, իսկ մյուս 50 տոկոսը ընտանիքները վերադարձնելու են հիմնադրամին՝ անտոկոս փոխառության կարգով, բնակարանամուտից հետո 10 (տասը) տարվա ընթացքում: Վերադարձվող գումարները ամբողջությամբ օգտագործվելու են ծրագրի հետագա փուլերում բնակարանաշինության նպատակով:

- ԿՈՂՄԵՐԸ պարտավորվում են համատեղ քննարկել շինարարության ընդհանուր արժեքը:

- ԿՈՂՄԵՐԸ պայմանագրային հարաբերություններ են ստեղծում շահառուների հետ, որտեղ պետք է հստակեցվեն շինարարության ավարտից հետո առաջիկա 10 (տասը) տարվա ընթացքում կառուցված բնակարանները չօտարելու հարցը:

2.Կողմերի պարտականությունները եվ իրավունքները

2.1 ԿՈՂՄԵՐԸ պարտավորվում են՝

2.1.1 պատշաճ և ժամանակին կատարել սույն համաձայնագրի 1-ին կետում ստանձնած պարտավորությունները:

2.1.2 շինարարական աշխատանքներն սկսել փորձնական մեկ մոդուլի համար՝ առաջին գումարներն ստանալուց հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

2.1.3 կազմակերպել բնակարանների կառուցման աշխատանքները՝ համաձայնեցված սկզբունքներին և գործող կարգի համապատասխան:

2.1.4 ապահովել թափանցիկությունը՝ գումարների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա:

3. ԿՈՂՄԵՐԸ ցանկացած ժամանակ իրավունք ունեն հիմնավորված պատճառաբանությամբ լուծել համաձայնագիրը՝ երկու ամիս առաջ տեղյակ պահելով միմյանց:

4. ԿՈՂՄԵՐԻ միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ: Համաձայնության չգալու դեպքում վեճերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

5. Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3. Կողմերի իրավաբանական հասցեները

Գյումրու համայնքապետարան	«ԱՌՔ» բարեգործական հիմնադրամ
Քաղ.Գյումրի, Վարդանանց հր. 1	Երևան, Մամիկոնյանց 58-Ա, բն.2
ՀՎՀՀ՝ 05511159 ԲանկՀՀՖՆ ԳՎ	ՀՎՀՀ՝ 00208098 «Արարատբանկ» ՓԲԸ
h/h 900216301029	h/h 15100100092701
Համայնքի ղեկավար՝	**Տնօրեն՝**
Ս.Բալասանյան	**Հ.Ստեփանյան**